Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում՝ **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի վերլուծական կարողությունների հզորացման և ռիսկերի կառավարման վրա հիմնված վերահսկողության համակարգի մոդելի մշակում** առաջադրանքները իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերությունների ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է համապատասխան փորձառությամբ խորհրդատվական կազմակերպություն ընտրելու միջոցով, նպաստել ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի վերլուծական կարողությունների հզորացմանը՝ ռիսկերի կառավարման վրա հիմնված վերահսկողության համակարգի մոդելի մշակման միջոցով:

Խորհրդատուն պետք է կատարի հետևյալ աշխատանքները՝

1. ուսումնասիրի կենսաթոշակային ապահովության համակարգում ռիսկերի գնահատման և դասակարգման տեսական մոտեցումները (սկզբունքները, մեթոդները), դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները,
2. ուսումնասիրի կենսաթոշակային ապահովության ոլորտում ռիսկերի գնահատման և դասակարգման միջազգային փորձը՝ առնվազն 3 երկրների օրինակով (այդ երկրները պետք է ունենան PAYG սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային համակարգեր),
3. մշակի և պատվիրատուի հետ համաձայնեցնի Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը (կոնկրետ օրինակների հիման վրա),
4. ուսումնասիրի ՀՀ-ում կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացման ընթացակարգերը (գործընթացը)՝ դիմում ներկայացնելուց մինչև դիմումի արդյունքները վճարման ցուցակում ներառելը, ինչպես նաև կայացված որոշումների իրավաչափության նկատմամբ իրականացվող վերահսկողության կառուցակարգերը (հաշվետվություններ, վերլուծություններ, ընթացակարգեր և այլն),
5. պատվիրատուի հետ համաձայնեցված մեթոդաբանության և ՀՀ-ում կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացման գործընթացի ուսումնասիրության հիման վրա սահմանի, նկարագրի և դասակարգի Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ոլորտում առկա ռիսկերը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գործառնական ռիսկերին,
6. ուսումնասիրի կենսաթոշակային ապահովության ոլորտում ռիսկերի կառավարման մոդելների վերաբերյալ միջազգային փորձը՝ պատվիրատուի հետ համաձայնեցված առնվազն 3 պետությունների օրինակով
7. Մշակի ՀՀ ԿԱՀ-ի համար կիրառման ենթակա ռիսկերի կառավարման ենթահամակարգի (ՌԿԵ) մոդել

8. որպես իրավական ակտի նախագիծ՝ մշակի վճարման ցուցակների ձևավորման կարգը, ներառելով նաև անհրաժեշտ կանխարգելիչ և հսկողական համադրումների և վերլուծությունների ընթացակարգերը)
9. իրականացնի ռիսկերի կառավարման համակարգի և վճարման ցուցակների ձևավորման կարգի փորձնական կիրարկում (3 ամիս անընդմեջ մշակված կարգի համաձայն ձևավորելով վճարման ցուցակները) և ըստ անհրաժեշտության լրամշակի Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ոլորտում առկա ռիսկերի կառավարման գործընթացի նկարագրությունը և վճարման ցուցակների ձևավորման կարգը.
10. իրականացնի ՌԿԵ-ի տեղեկատվական բաղադրիչի մշակման և էլեկտրոնային ենթահամակարգի ներդրման համար ընտրված կազմակերպության կողմից կատարվող աշխատանքների մեթոդական աջակցություն՝ մասնակցելով էլեկտրոնային ենթահամակարգի մշակման, փորձարկման և ներդրման աշխատանքների բոլոր փուլերին՝ համապատասխան բովանդակային հենքի իրացման նպատակով:

Խորհրդատուն պետք է ունենա՝

➢ հանրային կառավարման ոլորտում խորհրդատվական և հետազոտական գործունեության իրականացման առնվազն 5 տարված փորձ,

➢ Ռիսկերի վրա հիմնված կառավարման և վերահսկման համակարգի վերլուծության, մշակման, ներդրման կամ կիրառման առնվազն մեկ հաջողված ծրագիր՝ սոցիալական, ֆինասական, տնտեսական, հարկային, ապահովագրական, հանրային սապասարկման կամ հարակից այլ ոլորտներում,

➢ կենսաթոշակային ապահովության ոլորտում ծրագրերի իրականացման փորձ ունեցող բարձր որակավորման մասնագետներ

➢ Ռիսկերի վրա հիմնված կառավարման և վերահսկման համակարգերի վերլուծության, մշակման կամ կիրառման փորձ ունեցող բարձր որակավորման մասնագետներ, այդ թվում՝ առնվազն մեկ միջազգային փորձագետ

➢ ֆինանսական հոսքերի կառավարման, գործընթացների իրականացման, վերահսկման փորձ,

➢ կենսաթոշակային ապահովության ոլորտում վարվող քաղաքականութանը, ոլորտում վերջին տարիներին իրականացված ծրագրերին և ոլորտը կարգավորող իրավական դաշտին քաջածանոթ մասնագետներ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի դեկտեմբերի 15-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am